ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2019/49

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.02.2019թ. թիվ 26/26/3063-19 գրությամբ «ՄԱՈՒՆԹ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի 19.02.2019թ. թիվ 5/17-32 գրության հիման վրա, 26.02.2019թ. թիվ 26/26/3063-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «ՄԱՈՒՆԹ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ՄԱՈՒՆԹ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «ՄԱՈՒՆԹ» ՍՊԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

«ՄԱՈՒՆԹ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/49 ընթացակարգի շրջանակներում 01.03.2019թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 19.02.2019թ. թիվ 5/17-32 գրությամբ հայտնել է, որ «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման համար կազմակերպված ՔԶԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-18/8 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված եզրակացության արդյունքում «ՄԱՈՒՆԹ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտարարությունը որակվել է իրականությանը չհամապատասխանող՝ մասնավորապես «ՄԱՈՒՆԹ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն 201 350 ՀՀ դրամի չափով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/49 ընթացակարգի շրջանակներում 01.03.2019թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **ՍՑ-ԱՄ-2019/49 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

ՍՑ-ԱՄ-2019/49 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կողմից «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման համար կազմակերպվել է «ՔԶԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-18/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 28.12.2018թ. հայտ է ներկայացրել «ՄԱՈՒՆԹ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.01.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ՄԱՈՒՆԹ» ՍՊԸ-ն 18-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 29.01.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«ՄԱՈՒՆԹ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 201 350 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.02.2019թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.02.2019թ. թիվ 26/26/3063-19 գրությունը,

«Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի 19.02.2019թ. թիվ 5/17-32 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված

տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կողմից «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման համար կազմակերպվել է «ՔԶԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-18/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 28.12.2018թ. հայտ է ներկայացրել «ՄԱՈՒՆԹ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.01.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ՄԱՈՒՆԹ» ՍՊԸ-ն 18-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 29.01.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«ՄԱՈՒՆԹ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 201 350 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.02.2019թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների

գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ ***եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու*** և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված ***հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող*** կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ***ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:***

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը գտնում եմ, որ «ՄԱՈՒՆԹ» ՍՊԸ-ն «ՔՋԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-18/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, քանի որ Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.02.2019թ. թիվ 26/26/3063-19 գրությամբ «ՄԱՈՒՆԹ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ՄԱՈՒՆԹ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**